ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի
ղեկավար՝ Հակոբ Շահգալդյանին
«Սպիտակ Ձեռնափայտ» ՀԿ-ից
Հասցե. Կոտայքի մարզ, ք. Չարենցավան,7-րդ թաղ.13շ.
Հեռ.+37493203655, +37477357901
Էլ. Փոստ spitakdzernapayt@gmail.com

Դիմում

Խնդրում ենք հինգ տարի ժամկետով անհատույց տրամադրել ք. Չարենցավան , 5րդ թաղ., 2-րդ փողոց, 9 շենք գտնվող «Լուսաբաց» մսուր-մանկապարտեզի չօգտագործվող բաժնի 1-ին հարկի 120քմ հատվածը:

Նախատեսվում է կատարել կապիտալ վերանորոգում, վերազինել համապատասխան գույքով և գործարկել հաշմանդամություն ունեցող երեխաների (անձանց) զարգացման կենտրոն:

Կից ներկայացնում ենք ծրագրի բովանդակային մասը:

«Սպիտակ Ձեռնափայտ» ՀԿ-ի նախագահ Վ. Արզումանյան

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «02» 02 2022թ.
Մտից N 374 Գործ N 04

«Սպիտակ Ձեռնափայտ» ՀԿ-ն, որի ուղղվածությունն է հաշմանդամություն ունեցող անձանց աջակցելը, և ունի այդ ոլորտում եռամյա փորձ, ուսումնասիրելով Չարենցավան խոշորացված համայնքում հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները , ունի նախաձեռնություն համայնքում հիմնելու ներառական զարգացման կենտրոն:

Կենտրոնում անվճար հիմունքներով կիրականացվի հաշմանդամություն ունեցող երեխաներին և պատանիներին ուղղված ծառայություններ՝ էրգոթերապևտի, լոգոպեդի, հոգեբանի, ֆիզոթերապևտի, հատուկ մանկավարժների և սոցիալական աշխատողների, ովքեր նախապես կվերապատրաստվեն հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում և այլ մասնագիտացված կենտրոններում:

Կազմակերպությունը սերտ համագործակցելով Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների հետ, որոնց ռազմավարական գերակա հիմնախնդիրներից է ներառական հասարակություն ունենալը, պատրաստվում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ջանքերով օժանդակել հաշմանդամություն ունեցող երեխաներին և պատանիներին տարբեր ծառայությունների միջոցով տալ անկախ կյանքի հմտություններ և ներառել հասարակությանը, որպես լիարժեք անդամներ: